



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻ ՏԱՐԻ - ՅՈՒՆԻՍԻՍ 1938 14^{me} Année - Janvier 1938

Խմբագրական
Առ

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Թրգմ. Ն. Մ.

Տէրոջմով ուրախ ըլլալ
Յաղթող եղբայրութիւն մը

Յ. Խարրուեան

Շողեր եւ Շաղեր Կենաց ածուներէն

Ի՞նչ միայն մէկ ժամ — Երեք գիւտ երեք օրուան մէջ
Երկու ճամբայ — Ամենամեծ գիւտը
Ծնունդ

Հաւաքեց՝ Վեր. Ժ. Կ. Պ.
Ա. Տէր. Յովհաննէսեան

Սերտողութիւն

Scoffieldէն

Հին մարդը — Նոր մարդը

Ընտանեկան

Վեր. Ե. Քասունի

Մովսէս Մարգարէի մայրը

Պատանեաց

XXX

Եղիտէ

Վեր. Ժ. Կ. Պ.

Արծաթէ Լիճ

Սայուէլ Պ.

Քեզմէ ուրիշը չեմ ուզեր

Մանկանց

Յ. Ք.

Ծնունդի ագռաւը

Ջանազան Լուրեր

Վերապրող ոսկորներ

Եղբայրական աջակցութիւն

Երգ

Օրհնէ Տէրը ո՛վ իմ անձն

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ փրանսիայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի Յշմարիտ «Բանօին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարսէլլի մէջ 16 էջերով (կողքէն զատ)

անոր խմբագրական մարմնին անդամներն են

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ս. Փ. ՓԱՓԱՋԻԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԻԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ոգախտութիւնը կը վայելեն Քրիստոսով:

Յօդուածադրքեր միւլեւ որ ամբողջութեամբ խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին ջափ ընծեռնելի եւ մեղանով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
զարմանելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լատ. յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ աւելու համար:

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տուար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆի
խսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆի անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանուշով գրամական առաքումի առթիւ հաճեցէք մանուշին վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Ար. Գրոց Միութիւնը կապացուփին ունի շատ եկեղեցիներու, Ար. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ քոլէճներու հետ, եւ մեծերու թէ փոքրերու արդիւնաւոր սատար մը եղած է Ար. Գրոցը օրէ օր կարգալու եւ խորհրդածութեան առարկայ ընելու համար :

Ար. Գրոց Միութեան իւր 6,000 ծիւղեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ : Եւրոպայի մէջ խոշոր ծիւղեր կան — Յրանսա, Իտալիա, Ճանիւրաքա, Սքանտինաւիա, Հոլանտա, եւլն : Ասիոյ մէջ — Հնդկաստան, Չինաստան, Ճափոն, Բորնէա : Աւստրալիոյ մէջ — Նոր Հարաւային Ուելս, Ավսթրալիա, Թասմանիա, Նոր Զելանտա : Ամերիկայի մէջ — Գանատա, Միացեալ Նահանգներ, Պրազիլ, Արժէնթին, եւլն : Ափրիկէի մէջ — Հրաբաւին, Հարաւային, Արեւելեան, Արեւմտեան եւ Գերոնմական Ափրիկէ ու բոլոր Կղզիները :

Ար. Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լուսագոյն շահերուն համար : Մեծ ծառայութիւն կը մատուցանէ ապագային՝ նորահաս սերունդին դիւրեկալ միտքերուն վրայ տպաւորելով Ար. Գրոց ակզունքները, որոնցմէ կախեալ է ճշմարիտ յաջողութիւնը :

Ամէն ոք կրնայ անդամակցիլ Ար. Գրոց Միութեան, բայց անոնք միայն մամուլացելու են որոնք իրապէս կը բարձան կանոնաւորապէս եւ աղօթքով կարդալ որոշուած մասերը :

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մասնագիւլ

Ա Ն Դ Ա Մ Ի Ք Ա Ր Տ
ԱՆԴԱՄԻՆ ԱՆՈՒՆԸ

Ընդունում

Անուագրում

ձեռլին
Պատուակալ
Քարտուղարը

« Մանկութեւդ ի վեր Սուրբ Գրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Բիւսոս Յիսուսի վրայ եղած հաւատով : Բ. Տիմ. Գ. 15 :
Քարտուղար Սուրբ Գրոց Միութեան
J. H. HUBBARD
3 & 5 Wigmore St., London W. 1

1938

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ար. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է գարկ տալ Ար. Գրքը կանոնաւորապէս ամէն օր կարդալու շարժման :

Որդեգրուած մեծիւն է Ար. Գրքը ծայրէ ծայր կարգալ ճինգ տարուան ընթացքի մը մէջ : Ամէն տարի ամբողջովին կը կարդացուին Աւետարաններուն երկուքը եւ առաքելայնէրու թուղթերուն երկու երեքը : Որչափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գիրքերը փոփոխակի կը կարդացուին, Սարմաններն ալ մերթ ընդ մերթ միւս գիրքերուն միջեւ : Աւօրեայ ընթերցումները միջին հաշուով տասնըչորս համար են եւ մասնաւոր կիրպով կը յարմարին դժուարաներու եւ գործի մարդց պէտքերուն :

Ար. Գրոց Միութիւնը Արթիքի Միութիւն է միանգամայն : Անդամներն ամէն կիրակի առաւօտ կ'աղօթեն իրարու համար :

Ար. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ : Ար. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հրատարակուի 50 տարեկի լեզուներով :

Այս Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեռ անունը դիմել տեղային քարտուղարի մը, որ ձեզի կուտայ անդամակցութեան քարտ մը ուղղեալ ընթերցումներու ցանկը պարունակող : Այդ քարտը կը նորոգուին տարուէ տարի :

ԲԱՆԲԵՐ

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս սփտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա'լ վախճանք, որ չլլայ մէ
Անոր Կանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
սփտի գալ ու պի-
տի ջուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1958

ԹԻԻ 1



Ի՞նչ են հաւատացեալները



ԱՂ

Դուք էք երկրի աղը
Մատթ. Ե 13

Նաւատացեալները անցեալի և ներկայիս
մէջ ալ դեռ՝ զանազան անարգական յոր-
ջորջումներով անուանարկուած են:

Քրիստոնէութեան առաջին դարուն ամենէն
առաջին մակդիրը որ հեթանոսաց և հրէից կողմէ
անոնց տրուեցաւ, էր Քրիստոնեայ: Այս մակդիրը
ներկայիս ամեն մարդ սիրով կը կրէ, նոյն իսկ
ո՛չ քրիստոնեայ եղող և միայն անուանական
քրիստոնեաներու զաւակներ, և խաչը ամեն ոքի
զարդն ու փառքը կը նկատուի: Բայց այդպէս
չէր այն ատեն: Խաչի մահը ամենէն անարգ
մահը կը նկատուէր, որու չէին ուզեր հան-
դուրժել նոյնիսկ աշխարհի զիրար նկատուած
գերիներ, քանզի այդ մահուամբ մեռնող անձը
ամենէն անարգ և անիծեալ մարդը կը սեպուէր:
Ուրեմն քրիստոնեայ կը նշանակէր ամենէն
անարգ և անպատուուած Յիսուսի հետեւորդը:
Երբ այս անունը սիրելի եղաւ ազգերու, քանի որ
անոնք ալ ընդգրկեցին քրիստոնէութիւնը, ճշ-
մարիտ հաւատացեալներ այդ անունով ա'լ չէին
նախատուեր, հապա տարբեր տարբեր մակդիր-
ներով: Մեր ազգին մէջ իսկ անոնք կոչուեցան
ազանդաւորներ, թունտուրուճուներ, բուհճուներ,
եղբայրականներ, բորոտներ, երազողներ, խաւա-
րայիներ և այլն: Այս բառերը նոյնիսկ կը լսուին
բերաններէն այնպիսի կրթուած անձերու, որոնք
անձանօթ մնացած են Ս. զրական հաւատքի
խորքերուն, և կ'ուզեն միայն կրօնքի արտաքին
խաւերով և անոր բարոյական ազդեցութեամբ
զոհանալ:

Սակայն յայտնի է թէ ասոնք մեզի կանոն
ու չափանիշ տուող չեն կրնար ըլլալ: Մեզի
համար պէտք է աւելի խորը քննել և հասկնալ
թէ ի՞նչ է Ս. Գրքին Խորհուրդը հաւատացեալի
մասին և թէ ո՞վ է հաւատացեալը Աստուծոյ
մտքին մէջ:

Հին Կտակաբանի մէջ Աստուած հաւատաց-
եալները ընտրուած, զատուած ժողովուրդ կը
կոչէ, «դուք իմ վկաներս էք» կ'ըսէ: Ես ձեզի հայր
պիտի ըլլամ... Ես քեզ յաւիտեանական սիրով
սիրեցի... քեզ ինծի հետ նշանեցի... Եփրեմ իմ
անդրանիկս է... և այլն: Դիտենք Անոր մեծավա-
յելչութիւնը և մեր ոչնչութիւնը ու նաև նկատի
առնենք մեզի յատկացուած այդ բարձր դիրքը:

Տէր Յիսուս Իրեն հաւատացողներու մասին
տարբեր առիթներու տակ տարբեր անուններով
արտայայտուած է. — Աշակերտ, եղբայր, մայր,
քոյր, բարեկամ, և այլն...

Անոր շնորհքովը այս տարի պիտի ջանանք
հաւատացեալներու համար տրուած այս անուն-
ները համառոտակի վերլուծել և անոնց խորու-
թեան մէջ տեսնել հաւատացեալին փառաւոր
դիրքն ու կոչումը:

Մեր Տէրը Իր լեռան վրայի քարոզին մէջ
աշակերտաց հետեւեալ բառերը կ'ուղղէ. — Դուք
էք երկրի աղը: Աղը քիմիական բաղադրու-
թեամբ նիւթ մըն է օգտակար՝ և անհրաժեշտ
պէտքը հարուստին ու աղքատին, թագաւորին
ու ծառային: Քիմիագէտը զայն կը ճանչնայ
NaCl տարազով, ցոյց տալու համար թէ անիկա

երկու զանազան տարրերէ կազմուած է Natrium և Chlor. նախքին մը խառնուրդ մըն է, իսկ Քլոր գորաւոր թոյն մը: Երբ այս երկուքը ուղիղ համեմատութեամբ իրարու կը միանան, երեւան կուգայ աղը:

Դեղեցիկ զուգադիպութեամբ կենդանի օրինակ մը չէ՞ այս հաւատացեալին համար, որուն ներքին մարդը մեղաւոր ու թունալից է և զուրկ ամէն բարձր աստուածային յատկանիշերէ բաց լի պղծութեամբ ու պիղծ գործերով: Սակայն տես մեծ հրաշքը: Աստուած ինք կը խոնարհի առ մարդս, դաշինք մը կնքելու անոր հետ: Իր շնորհքը հանգչեցուած է անոր վրայ. անոր մեղքերը կը ներէ, փրկութեան վստահութիւն կուտայ և քիչ առաջուան թոյնը կ'ըլլայ օգտակար տարր մը: Անիկա ո՛չ թէ բարեփոխուած է հապա փոխուած է, Աստուծոյ հետ ունեցած շփումին պատճառաւ:

Սօզոս թոյն մըն էր իր բոլոր գեղեցիկ յատկութիւններովն ու բարի տրամադրութիւններով հանդերձ. Քրիստոս հանդիպեցաւ անոր, հրաշքը պատահեցաւ, ու ինք եղաւ առաքեալ մը, Աւետարանին ռահվիրան, որ իր անձին համար կ'ըսէ, «Ա՛յ ո՛չ թէ ես կ'ապրիմ, հապա Քրիստոս կ'ապրի իմ մէջ»:

Ճան Պընեան, Ճօրճ Միլլըր այսպէս թոյներ էին, որոնց վրայ Աստուծոյ փրկարար շնորհքը ծագելով՝ զանոնք աղի փոխեց: Ուրեմն ո՛չ Սօզոս կը խորհի ո՛չ ալ դուն խորհէ թէ դուն քեզի կրնաս աղօթքի կամ հաւատքի մարդ մ'ըլլալ, պէտք է նախ վերստին ծննդեան հրաշքը կատարուի քու վրադ, անկէ վերջը Աստուած գրեզ կրնայ գործածել որքան որ Ան քու մէջդ տեղ և նիւթ գտնէ գործածուելիք: Աշխարհի ամենէն մեծ մարդը, ամենէն բարոյականն ու պատուաւորը ամենէն զօրաւոր թոյնն է, պէտք է անիկա շնորհքին հանդիպի աղ ըլլալու համար:

ԱՂԻՆ ՊԱՇՏՈՆԸ. —

Աղը նեղխումի և ապակաւութեան հանդէպ ամենամանօթ պաշտպանողն է, խորհրդանշանն է յաւերժացումի և անապականութեան: Ուրեմն երբ Տէրը կ'ըսէ, դուք էք երկրի աղը, ցոյց կուտայ թէ մեր գործն է երկիրը ապականութենէ պահել, ու Եկեղեցին Ս. Հոգիին օգնութիւնով ամենազօրաւոր հակախիչն է, մեղքի ու ապականութեան խմորումին և արգելիչն է զօրացող անօրէնութեան խորհուրդին: Ու երբ ինքը մէջտեղէն վերնայ (Ա. թեո. Բ 6-11), այն ատեն

յստակօրէն յայտնի պիտի ըլլայ իր մեծ ու կարեւոր ազդեցութիւնը աշխարհի մարդկութեան մէջ:

Տասը հաւատացեալներ Սողոմն ու Դոմորը կրնային կործանումէ պահել և Աստուծոյ զաւակներ այս օրերուն ալ — շնորհաց շրջան. ըլլալով հանդերձ, շատ մը քաղաքներու և երկիրներու կանգուն մնալուն պատճառ են:

Աղը համ կուտայ: Եկեղեցիին ազդեցութիւնը որ Քրիստոսի անոյշ հոտն է, համ կուտայ դեռ ընտանեկան, ընկերական և կառավարական շրջանակներու մէջ: Դիտէ շուրջդ, ամէն մարդի մէջ պիտի տեսնես աղ եղող Աստուծոյ եկեղեցիին համը:

Աշխարհի մարդոցմէ շատեր դեռ չեն անդրադարձած այն ազդեցութեան որ Աստուծոյ զաւակաց կիրակիէ կիրակի և ուրիշ օրեր ունեցած հաւաքոյթներէն կը սփռուի, ու թէեւ աշխարհ խիստ ցած աչքով նայի անոնց վրայ սակայն անոնք դեռ աղ կը մնան:

Աղին արժէքը կարելի չէ բաւականաչափ գնահատել: Հին մարդիկ, դեռ հիմա ալ, մանաւանդ տաք երկիրներու մէջ աղը ամեն բանէն աւելի պիտանի սեպած են և իրաւունքով, նոյնիսկ ոսծիկին ու ամսականին (salaire) համար աղ ըսած են: (Տե՛ս Եզր. Դ 14 «ոսծիկ»-ին տեղ Քաղդէարէն գործածուած «աղ» բառը լուսանցքին մէջ):

Ա՛հ մեր Տէրոջ մտքին մէջ ի՞նչ բարձր տեղ կը զբաւեն իր աշակերտները, երբ զանոնք աղ կը կոչէ: Աղ — անհրաժեշտ պէտքը: Աղ — աշխարհ բռնողը: Աղ — աշխարհի արժէք տուողը: Աղ — Քրիստոսի աշխարհ գալուն և իր աշխատութեան միակ պտուղը (վարձատրութիւնը) (Ես. ԾԳ 11):

ԱՂԻՆ ՕԳՏԱԿԱՐԱՊԵՍ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ. —

Ուրեմն, եթէ աղը այս բարձր պաշտօնն ունի ինչպէ՞ս կարելի է կիրարկել զայն:

Միայն մէկ կերպով: Պէտք է աղը հալի իր օգտակար ըլլալիք նիւթին մէջ: Անիկա որքան որ շօշափելի և տեսանելի է, իր պաշտօնը չկրնար կիրարկել: Պարագան նոյնն է մեզի հոգեւորներու համար ալ: Աստուծոյ զաւակներ իրենց պաշտօնը իրենց կեանքովը կը վճարեն և վճարելու են: Անիկա մտքիդ մէջ պահէ սիրելի. որքան որ մեռած չես, որքան որ յայտնի կ'ընէ հին մարդը և անոր մարմնաւոր գործերը քու մէջդ, քու արդարութիւնդ, քու քարոզչիւրդ, քու բարեգործութիւններդ, քու աւետարանչութիւն-

ներդ ու ասոնց նման ծրագրերներդ, համ չես կրնար տալ քու շրջանակիդ, և ո՛չ ալ կրնաս զայն ապականութենէ պահել: Նոր տարուան առթիւ ահա պատեհութիւն մը, անգամ մըն ալ անդրադառնալու այս պատուական խորհուրդին: Ես ալ եմ և ալ ըլլալու կանչուած: Այս պաշտօնս կրնամ կատարել Ս. Հոգիին գերիշխանութեան և առաջնորդութեան տակ, երբ իմ անձնական բոլոր ոյժերս գործելէ դադրին և թոյլ տամ որ Ս. Հոգին Ինքը ատեն զիս Իր ձեռքին մէջ Իր ուզածին պէս և ուզած տեղը և ուզած չափովը գործածելու: Ես կամք չունիմ, իմ կամքս Անորն է, Ան ուր որ է, ո՛ւր որ զիս տանի, ես հոն եմ: «Քրիստոս իմ կեանքս»: Կրնա՞նք տարին այսպէս սկսիլ և կ'ուզե՞նք այսպէս ալ շարունակել:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ.—

«Ապա եթէ աղը իր համը կը կորսնցնէ, ինք ինչո՞վ պիտի աղուի. անկէ ետեւ բանի մը չգար, միայն թէ դուրս ձգուելու և մարդոց աչքին տակ կոխուելու»:

Գիտե՞ս թէ աղը համը չկորսնցներ. իսկ մեր Տէրը այս խօսքով, ահարկու և ծանրակշիռ ազդարարութիւն մը կ'ընէ քեզի և ինծի: Համը կորսնցնող Աստուծոյ զաւակներ մէկէ աւելի եղած են պատմութեան մէջ և իսկապէս ալ անպէտ տարրեր դարձած են ընկերութեան համար. անոնց վախճանը խիստ ողբալի եղած է: Թերեւս այսպիսիներ ճանչցած ես, անոնց օրինակը և Յիսուսի այս խօսքը քեզի ազդարարութիւն մը թող ըլլայ անմոռանալի:

Յ. Ն. Ղ.



ՏԵՐՈՋՄՈՎ ՌԻՐԱՍ ԸԼԼԱԼ

Ուստի, իմ եղբայրներս,
ուրախ եղէ՛ք Տերոջմով:
ՓԻԼ. Յ. 1

Այս յորդորը կը բղխի Հոովմի մէջ բանտարկուած մարդու մը սրտէն: Ամբողջ Փիլիպպեցւոց թուղթը կրնայ կոչուիլ «Երգ մը գիշերուան մէջ», որուն ուրախ եղանակը ծագում կ'առնէ այնպիսի պարագաներէ, որ ժպտուն չեն թուիր թեթեւ ու զուարթ հոգիներուն: Սակայն թշնամիներով շրջապատուած կեանքի պայմանները, կարծես

աւելի մեծ եռանդով կը լեցնեն Առաքեալը ցնծման ու փառաբանութեան երգեր բարձրացնելու, նման այն քնարներուն, որոնց թելերը կը թրթռան հեղեղու ազդեցութեան տակ և որչափ որ ուժգին ըլլայ փութորիկը՝ այնքան աւելի բարձրաձայն ու յստակ կ'ըլլայ անոնց նուագը: Առաքեալին ուրախութեան արմատը ոչ թէ կեանքի պայմաններուն՝ այլ «Տէրոջը մէջ» հաստատուած է: Արմատացած է այն նուիրական հոգին խորերը, որուն մէջ ամրացած էին նաև անոր յոյսերուն, նպատակներուն և նոյն իսկ աւելի փոքր առօրեայ ձեռնարկներուն արմատները: Անոր համար ամէն ինչ Աստուծոյ մէջ տնկուած է ու ոչինչ օտար հողի վրայ: Ուրեմն անոր յոյսին, հաւատքին և սիրոյն հետ կողք կողքի կ'աճի նաև բուռն ուրախութիւն մը: Ու ամէնն ալ իրենց սնունդը կ'ստանան «Քրիստոսի անքննելի ճոխութենէն»: Եւ քանի որ Անհունին մէջ արմատացած են, միթէ կարելի՞ է որ խանգարուին հունաւոր փոփոխութիւններէ: Քանզի անիկա ջուրերու քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ, որ իր արմատները գետի քով երկնցնելով, տաքութեան գալը չտեսներ, հապա անոր տերեւը կանանչ կ'ըլլայ, ու երաշտութեան տարին նեղութիւն չքաշեր, ու պտուղ տալէն ետ չմնար:

Այս պաղարար ու սննդարար գետինն մէջ ոչ մէկ բոյս կրնայ չորնալ: Ուստի Առաքեալը կը յորդորէ իր ընթերցողները, որպէսզի անոնք ետեւէ ըլլան այնպիսի ուրախութիւններու, որ իրենց սնունդը Յաւիտենականէն կ'առնեն: Քանզի նոյն իսկ քրիստոնէական կեանքի մէջ մեզի շարունակ վտանգ կայ աւելորդ բաներէ հրապուրուելու և մեր ցնծութիւնն ու սրբացումը ծանծաղ ու շուտով սպառող աւերու մէջ փնտռելու: Վտանգ կայ, քանզի աւելորդ բաները քիչ մը սնունդ կուտան ու մենք կը խաբուինք անոնց յառաջ բերած արագ աճումէն: Մէկէն ի մէկ մասնաւոր ցնծութիւն մը կը բողբոջի:

Օր մը, քանի մը ցորենի հատիկներ ցանցի տափակ ամանի մը մէջ, որոնք խիստ արագ աճեցան: Կանանչ տերեւները շատ զօրաւոր կ'երեւէին, սակայն անմիջապէս թառամիլ ու ծռիլ սկսան, վառնդի անոնց սննդեան ակը ցամքած էր, քանի որ խորունկ հողի մէջ չէին գտնուեր: Ասոր նման են բոլոր այն ուրախութիւնները, որ ժամանակաւոր պարագաներու և աշխարհային յարաբերութիւններու մակերեսային հողին մէջ արմատացած են: Անոնց պարունակած սնունդը ցաւալիօրէն սահմանափակ է ու սնունդի պակասէ կը խամրին ու կը մեռնին:

Քրիստոնէական ուրախութիւնը «Տէրոջը մէջ» արմատացած է ու կը տեւէ որչափ ժամանակ որ Աստուած գոյութիւն ունի ու կը տեւէ: Անոր համար Քրիստոս կ'ըսէ՝ «Ձեր ուրախութիւնը մէկը չառնէր», բոլոր անոնց որ իր մէջը կը կենան:

«Նոյն բաները ձեզի գրել ինծի ձանձրութիւն չէ, ու ձեզի ապահովութիւն է»: Պօղոս չվախնար կրկնելու իր տուած զասը, թէպէտեւ անիկա բարեկամական ազդարարութիւն մը կը պարունակէ: Ինծի կը թուի թէ Առաքեալին կոչած «Նոյն բաները» Փիլիպպէի մէջ երեւցած անմիաբանութիւններն ու երկպառակութիւններն են: Թերեւս անոնց նախապէս զրած էր, կամ թէ պատգամաւոր մը զրկած, կամ հոն գտնուած միջոցին անձամբ անոնց խօսած: Ինչ կերպով ալ որ զգուշացուցած էր զանոնք, հոս կը կրկնէ իր զգուշացուցիչ յորդորը: Անիկա Յիսուս Քրիստոսի հաւատարիմ ծառան է: Որչափ ժամանակ որ երկպառակութիւնը դարմանուած չէր, անոր փողը պիտի հնչէր: Ձեր քաշուեր անհաճոյ յորդորներ կարգալէ ու զանոնք կրկնելէ՝ երբ Տէրը դաւանողներու կեանքին մէջ ծուռ ու սխալ բաներ կը նշմարէր: Քրիստոնեայ պաշտօնեայի մը համար վտանգ կայ քաղցր ու ոլորկ լեզու գործածելու. յաւէտ կարագի նման կակուղ քան սուրի պէս կտրուկ բառեր արտասանելու, աւելի հարսանեկան զանգակներ հնչեցնելու քան ազդարարութեան ու վտանգի զանգակը դարնելով, քաղաքին մէջ պտտելու:

«Ես կը սիրեմ իմ քարոզիչս, որովհետեւ զիս երբէք անհանգիստ չըներ», ըսաւ օր մը մէկը: Այս անհոգ երէցին ծառայութիւնը օրօրի նման կը քնացնէր իր ունկնդիրները: Երբէք չէր ջանար ազդարարական պատգամով մը զանոնք իրենց քուններէն արթնցնել: Եթէ հաւատարիմ ենք Տէրոջը՝ երբեմն անհանգիստ ընելու ենք մարդիկ, յիշեցնելով անոնց մեղքը, մանաւանդ անոնց սիրած մեղքերը, որ զանոնք կը թմրեցնեն ու իրենց վիճակի մասին անգիտակից կ'ընեն: Այնչափ կը թմրեցնեն անոնց խիղճերը, որ մեղքի գիտակցութիւնն անգամ կը բացակայի: Եթէ խաղաղութիւն չկայ, «խաղաղութիւն, խաղաղութիւն» աղաղակելու չենք: Կրկին ու կրկին հնչեցնելու ենք ազդարարութեան փողը, քանզի միայն այս կերպով ապահովութիւն կ'ըլլայ:

Սակայն եթէ Առաքեալին այս հաւատարմութիւնը ընդօրինակել կ'ուզենք, չմոռնանք նաև ընդօրինակել անոր շնորհալի ու շնորհածին քա-

ղաքավարութիւնը: Մեծ փափկանկատութիւն մը կայ այս թուղթին մէջ: Փափկանկատութիւն մը, զոր Քրիստոսի աշակերտ մը միայն կրնայ ունենալ: Ասկէ աւելի մեծ փափկանկատութիւն կ'ըլլա՞յ, որ ուրախ ըլլալու ջերմ յորդորի մը միացոյի կրկին ու կրկին տրուած ազդարարութեան մը յիշեցումը: Անշուշտ առաքեալին բուն ուրախութիւնը փոխանցուելով իր ընթերցողներուն, հալեցուց անոնց սրտին սառը ու զանոնք պատրաստեց խիստ ազդարարութիւններ լսելու: «Տէրոջմով ուրախ» եզոզ քարոզիչ մը կարող է ամէն սրգելք մէկդի դնել ու հրաժառ քաղաքավարութեամբ մը մուտք գտնել այն սիրտերուն մէջ, որոնց պիտի բերէ իր ազդարարութիւնները և յանդիմանութիւնները: Ամէն կերպով նմանինք Առաքեալին: Միևնոյն կրակը որ կ'երևայ մեր ամենասուրբ ուրախութեան մէջ, երեւնալու է նաև մեր յանդիմանութեան մէջ: Նոյնիսկ յանդիմանելու միջոցին ներշնչելու ենք մեր յանդիմանութեան առարկան: Մարդոց թերութիւնները մատնանիշ ընելու ատեն անոնք այնպէս զգալու են թէ միևնոյն պարագային նաև թեւեր կ'ընդունին մեզմէ՝ թռչելով շիտակն ընելու:

Թարգ. Ն. Մ.

ՅԱՂԹՈՂ ԵՂԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԸ

(Նոր Տարուան առթիւ)

«...Վասնզի մեր եղբայրներուն դէմ չար խօսողը վար ձգուեցաւ որ անոնց դէմ չարախօսութիւն կ'ընէր մեր Աստուծոյն առջև ցորեկ ու դիշեր և անոնք (եղբայրները) անոր յաղթեցին զառնուկին արիւնովը, ու իրենց վկայութեանը խօսքովը, և իրենց կեանքը չի սիրեցին մինչև ի մահ»:

Ազգերու պատմութիւնը կարգ մը յաղթական աշխարհակալներ արձանագրած է, որոնք մեծ բանակներու զլուխն անցած, հուրով ու սուրով ազգերը նկուն ըրած ու իրենց անունները յաղթական յայտարարած են: Աշխարհի դրութեան մէջ, հին ատեններէն մինչև ներկայ օրերուս, «իրաւունքը զօրաւորին» սկզբունքը կը տիրապետէ:

Բայց վերի համարներու եղբայրութիւնը կոչուած է յաղթական ու իր զէնքն ալ կը յիշուի եղած ըլլալ՝ Գառնուկին արիւնը: Կը տես-

ներք որ, այս յաղթողները սպաննուած և Գառնուկին վախճանին բաժնեկից եղած էին:

Հայ ազգի պատմութեան մէջ ալ՝ նման օրհնեալ պարագայ մը յիշատակելի է: Վարդան Մամիկոնեանը և իր զինուորները, անհաւասար ուժերու ճակատամարտին մէջ, պարտուեցան, բայց իրենց պարտութիւնը զիրենք յաղթողներու կարգին դասելու արժանացուց: Թէև իրենք պարտուեցան, բայց այն սկզբունքը յաղթեց, որուն համար նահատակուեցան:

Մեր Տէրը երեք ու կէս տարիներու գործունէութեամբ՝ անհամար թշնամիներու դէմ 12 ձկնորս և մաքսաւորներէ կազմուած աշակերտներ միայն ունեցաւ, որոնք զինք լքեցին ու խոյս տուին, և ինք միայնակ զիմազրաւեց մահերուն սուկալիին իբր գառնուկ մը: Թշնամիները խորհեցան թէ յաղթեցին, բայց Յիսուս խաչին վրայ արտասանեց. «Կատարուեցաւ», այսինքն «յաղթեցի»: Նաև ուրիշ առթիւ ըսաւ. «Ես յաղթեցի աշխարհին, քաջ եղէք»: ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՅԱՆԹՈՒԹԻՒՆ:

Վերոյիշեալ եղբայրներն ալ թէև սպաննուած ու պարտուած՝ բայց իրականութեան մէջ յաղթող եղած էին: Վերի համարներուն մէջ երեք պայմաններ կը յիշուի, որն էր իրենց յաղթութեան գաղտնիքը, սատանային և իր աներեւոյթ ուժերուն դէմ:

ա. Գառնուկին արիւնոյն յաղթեցին, որուն եօթը գործերը յիշենք.

1. Կը քաւէ (կը ծածկէ): Հոովմ. Գ. 25 - 25, այս պատուական եղբայրները Քրիստոսի քաւիչ զօրութեանը տիրացած էին լոկ հաւատքով:
2. Կ'արդարացնէ: Հոովմ. Ե. 9: Անոնք Քրիստոսի արեան արդարացնող զօրութեան կ'ապաւինէին, երբ անդին սատանան, չարախօսութիւն կ'ընէր իրենց համար:
3. Կը փրկէ: Թէ՛ մեղքի դատապարտութենէն և թէ՛ տիրապետութենէն: Եփս. Ա. 1:
4. Խղճմտանքը կը սրբէ (մեղած գործերէն), Եբր. Թ. 14, հետեւաբար, մաքուր խղճմտանք մը ունէին, որ զիրենք չէր յանդիմաներ:
5. Կը անբովկցնէ: Յայտ. Է. 14: Քրիստոսի արդարութեան ճերմակ զգեստը հագած էին՝ միայն հաւատքով:
6. Յաւիտենական կեանք կ'ուտայ: Յովհ. 2. 54, 55 և 40, 41: Անո՛վ միայն կեանք ունէին և ամէն ատեն ալ Անո՛վ կը սնուցուէին:
7. Կը խօսի: Եբր. ԺԲ. 24: Անոնք կը հաւատային արեան ներկայ զօրութեան, որ կը խօսէր տակաւին իրենց:

Նկատելի է որ Աստուծոյ խօսքին մէջ եօթը թիւը կատարելութիւն կը ցուցնէ, հետեւաբար արեան զօրութիւնն ալ՝ կատարեալ է իր եօթը հանգամանքներով:

Ի՞նչպէս կը ստացուի այս արեան զօրութիւնը: Լոկ հաւատքով: Այն հաւատացեալը որ վերոյիշեալ արեան ու է գործին պէտքը կը զգայ ու սրտով կը հաւատայ անոր զօրութեանը, Ս. Հոգին այդ զօրութիւնը ի յայտ կը բերէ իր մէջ: Ահա այս է անոր տիրանալու միակ միջոցը: Յայտնութեան զբքին եղբայրութիւնը աղպէս ըրաւ: Արդեօք փորձա՞ծ ես զայն:

բ. Իրենց վկայութեանը խօսքով յաղթեցին: Անոնք վկայող քրիստոնեաներ էին. չէին ամբշնար Քրիստոսի արեան իրենց կեանքին մէջ ըրած հրաշքները վկայելէն: Յովհ. ԺԲ. 42, 43: Անոնք գաղտնի աշակերտներ չէին: Սատանան կը սոսկայ ճամարիտ վկայութիւններէն: Անոնք կը վկայէին ըստ Ա. Պետ. Գ. 15ին:

1. Տէր Աստուծոյ սրտին մէջ սուրբ պահելով, այսինքն՝ սուրբ կեանք ապրելով: Անոնք կեանքը հաշտ էր իրենց վկայութիւնով:
2. Հեղութիւնով կը վկայէին:
3. Երկիւղածութիւնով կը վկայէին:
4. Աստուծոյ խօսքով կը վկայէին, որն է.

1. Զօրեղ, Եբր. Դ. 12, 13: Աստուծոյ խօսքը երկսայրի սուրէն աւելի կ'լուրուկ է և սրտին խորհուրդները կը քննէ:
2. Ամրոցներ քակող. Բ. Կորն. Ժ. 4, 5: Նա կարող է բոլոր հպարտացած բաները Քրիստոսի հնազանդութեանը գերի ընելու:
3. Սորվեցնող, յանդիմանող, շտկող և խրատող Բ. Տիմ. Գ. 16:

Այսչափ զօրաւոր զէնքին դէմ ո՞վ կրնայ կենալ: Փրկուած եղբայրները սատանային դէմ այս զէնքը գործածեցին: Դուն ալ այսպէս կը վկայե՞ս:

գ. Անձերնին մինչեւ ի մահ չսիրելով յաղթեցին:

1. Արծաթասիրութիւնը. Ա. Տիմ. 2. 10, որը ամէն չարեաց արմատը որակուած է:
2. Հաճոյամոլութիւն ու աշխարհասիրութիւն (Դեմասի ըրածին պէս):
3. Փառասիրութիւն կամ հոգ. հպարտութիւն, որն է ամենէն աննշմարելի բայց շատ վտանգաւոր ախտ մը: Այս ախտը, շատ մը Աստուծոյ գործունեայ զաւակները ժլատութեան կը մատնէ: Փոխանակ Յիսուս Քրիստոսը բարձրացնելու,

իրենց եսը Անոր առջեւ դնելով՝ ինքզինքներն միայն կը ցուցադրեն:

Երիտասարդ քարոզիչ մը, տարեց երկրագործի մը հարցուց թէ ի՞նչ է Քրիստոնէին մեծ թշնամին: Այս մեղանշական եսը չէ: Երկրագործը ժպտելով ժխտական պատասխանեց «Կը սխալիք, քրիստոնէին թշնամին իր արդարեան է»: Որչա՛փ ճշմարիտ է: Վերսյիշեալ սպիտակազգեստ ու յաղթական եղբայրները մինչեւ ի մահ անձերին չսիրեցին: Ո՛վ քրիստոնեայ, եթէ յաղթական կեանքին կարօտը ունիս, ահա շատ պարզ երեք պայմաններ: Շատ սուրբեր այսպէս ապրեցան: Կարդա Եբր. Ժ. 32—39 և Ժ. 36—38:


Բէնէտինա, Գալիֆօրնիա

15 Նոյ. 1937

Յ. Հ. ԽԱՐԲՈՒԹԵԱՆ



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆ ԱՅ

ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԻՆՉ, ՄԻԱՅՆ ՄԷ՛Վ ԺԱՄ



Քանի մը տարի առաջ Նիւ Եօքքի Պարոն մը հարաւային նահանգներու մէջ կը ճամբորդէր. հոն շատ զեղեցիկ և հարուստ աղջկան մը հանդիպեցաւ և անոր հետ ամուսնացաւ: Անոնք Նիւ Եօքք վերադարձան և շատ մը աշխարհային ընկերութեանց մէջ խորասուզուեցան: Դեռահասակ տիկինը շուտով հիացողներու խումբեր ունեցաւ:

Նաեւ իր ամուսինը Նիւ Եօքքէն Նիւ Փօրթ և Լոնտօնէն Բարիդ սլացաւ, միայն հաճոյքի համար: Երիտասարդ աղջիկները Տիկ. Լօնի նայեցան հիացումով, իբրեւ ընկերութեան առաջին ղեկավարներէն մին:

Քանի մը տարիներ վերջ երբ նա Գալիֆօրնիայէն կը վերադառնար, մահացու կերպով փնասուեցաւ շոգեկառքի արկածով մը: Զանկաւ անմիջապէս աննշան կայարան մը իջեցուցին և մօտակայ գիւղէ մը բժիշկ մը կանչեցին:

Բժիշկը երբ զայն քննեց ստիպուեցաւ անոր ըսելու թէ միայն ժամ մը ունի ապրելու:

«Ես առն երթալու եմ, Նիւ Եօքք» ըսաւ նա հրամայական շեշտով մը:

«Տիկին, անկարելի է, եթէ շարժելու ըլլաք, ատիկա ձեր ապրելիք ժամանակը աւելի պիտի կարճեցնէ»:

Նա տախտակամածին վրայ կը պառկէր, մարդիկ իրենց վերարկունները ծալեցին անոր բարձ մը շինելու: Անիկա ազօտ կայարանին մէջ իր շուրջը նայելով ըսաւ. «Տօքթոր, ինծի ըսիք թէ իրաւ միայն ժամ մը ունիմ»:

«Ոչ աւելի»:

«Եւ այս է բոլորը որ ինձ մնացած է այս աշխարհի փառքէն»:

Նա իր թեւը երեսին վրայ նետեց և երկար ժամանակ մտածկոտ պառկեցաւ այդ առանձին վայրին մէջ և յետոյ դարձաւ խելացնոր ակնարկով բժիշկին. «Կը խորհիմ այդ բոլոր բաներուն վրայ, զորոնք իմ դրամովս և ժամանակովս ըրած եմ...: Աստուած ինձմէ ուզեց որ ես աղքատներուն և հիւանդներուն օգնեմ: Ո՛հ հիմա ուշ է, ես միայն ժամ մը ունիմ»: Խօշ ճգնաժամէ մը յետոյ. «Ինչո՞ւ ես նորաձեւութեան առաջնորդելէն ի վատ բան մը չըրի Տօքթոր: Մե՛ծ Աստուած: Նորաձեւութիւն: Հիմա միայն ժամ մը ունիմ, մէկ ժամ»:

Բայց զայն իսկ չունէր, քանզի իր տաղնապը մահացու էր և բոպէ մը վերջ հոգին աւանդեց:

Անիկա իր հոգիին վրայ արթնցաւ, բայց ուշ, ո՛հ շատ ուշ էր: Նա իր բոլոր կեանքի ընթացքին անհոգ գտնուած էր:

«Հապա մենք ի՞նչպէս պիտի ազատինք եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը»: «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը»:

ԵՐԵՔ ԳԻԻՏ ԵՐԵՔ ՕՐՈՒԱՆ ՄԷՉ



Պ. ի մէջ տեղի ունեցող աւետարանական ժողովի մը վախճանին, քարոզիչը երջանիկ երեցող զեռատի տիկնոջ մը հարցուց թէ արդեօք «Նորէն ծնած էր»:

«Ես յաւիտենական կեանք ունիմ» պատասխանեց նա:

«Ինչէ՞ն գիտէք թէ յաւիտենական կեանք ունիք» հարցուց անոր աւետարանիչը:

Երկուշաբթի իրիկուն Հոգմայեցուց թուղթին երրորդ զուխին մէջ (Հոգմ. 3. 10-23) տեսայ որ

Աստուծոյ առջեւը յանցաւոր մըն եմ և անկարող: Երէկ իրիկուն նոյն թուղթին հինգերորդ զուխին վեցերորդ համարէն հասկցայ որ Քրիստոս ինծի համար մեռած է, ամբարիշտ և թշուառ մեղաւորի մը, այս իրիկուն Յովհաննու աւետարանին Ե. 24 ին մէջ տեսայ որ ես յաւիտենական կեանք ունիմ ու դատապարտութեան տակ պիտի չիյնամ, հապա մահուանէ դէպի կեանք անցած եմ»:

Նորադարձը երբ այս բաները կը խօսէր, ուրախութեան արցունքներ կը թափէր. իր սիրտը երախտագիտութեամբ ու սիրով լեցուած էր Անոր հանդէպ՝ որ այս բոլորը ըրած էր իրեն և յաւելցուց «Ով Աստուած քեզի բոլոր սրտովս շնորհակալութիւն կը յայտնեմ»:

Ինչ որ այս դեռահասակ տիկինը երեք օրուան մէջ սորված էր, ցաւալի է որ ուրիշ հազարաւորներ քսան, երեսուն, քառասուն մինչև իսկ յիսուն տարուան մէջ չեն սորվիր, բայց կրնան 3 րոպէի մէջ սորվիլ:

ԵՐԿՈՒ ՃԱՄԲԱՅ

Ամերիկայի Անտեան լեռներուն բարձր կատարներուն վրայ կան կէտեր, ուր անձրեւի կաթիլ մը եթէ մէկ սանթիմէթը աջ իյնալու ըլլայ, միւս կաթիլներու հետ խառնուած խաղաղական ովկէանոս կը թափի, իսկ մէկ սանթիմէթը ձախ, դէպի Ադլանտեան: Ինչ հեռաւորութիւն: Հետեւեալ պատմութիւնը ասիկա կը բացատրէ:

Ընդհանուր պատերազմէն քիչ առաջ, Նիւ-Եորք քաղաքին մէջ երկու ոռոս անիշխանական հրեաներ խեղճուկ սենեակի մը մէջ միասին կ'ապրէին: Անոնցմէ մին իրիկուն մը քաղաքին ներքին միսիոնարութեան հետ շփման եկաւ և աւետարանչին կողմէ թերթիկ մը ընդունեց: Երիտասարդ անիշխանականը զայն պժգանքով մէկդի նետեց: Բայց սիրտը հանգիստ չեղաւ: Նա երկրորդ անգամ ժողովի եկաւ և այս անգամ Նոր Կտակարան մը ընդունեց ու հետաքրքրութեամբ զայն բանալու ատեն աչքերուն զարկաւ Հոով. Բ 9, 10: «Նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ ո՞ր չար կը գործէ, առաջ Հրեային ու ետքը Յոյնին, իսկ փառք ու պատիւ և խաղաղութիւն այն ամէնուն որ բարի կը գործէ, առաջ Հրեային ու ետքը Յոյնին»: Այս խօսքը իրեն վրայ մեծ ազդեցութիւն ձգեց, քանզի

իրեն, Հրեայի մը ուղղուած էր: Տուն վերադարձաւ և այս պզտիկ գիրքը սերտել սկսաւ:

Աստուծոյ հոգին անոր սրտին մէջ զօրաւոր կերպով գործեց, քիչ վերջը արդէն Քրիստոսէն պարտուած էր նա և Միացեալ Նահանգներու հրեայ ժողովուրդին մէջ աւետարանին օրհնեալ մէկ քարոզիչը եղաւ: Անոր անունը Աբրահամ Սիլվըրշթայն է:

Անոր ընկերը այս գիրքը չուզեց ընդունիլ: Իր կործանարար զաղափարներուն մէջ յարատեւեց և պատերազմի ընթացքին հակառակ սահմանէն ներս անցնելու խիստ մեծ արգելքներու՝ յաջողեցաւ Ռուսիա մտնել: Քիչ յետոյ անոր անունը բոլոր աշխարհի ծանօթ եղաւ — թրոցքի, Ռուս յեղափոխութեան մեծ առաջնորդներէն:

Թրոցքի կ'ապրի դեռ, թափառաշրջիկ կեանք մը, արդեօք յոյս կա՞յ իրեն. Աստուած գիտէ: Երանի՛ թէ ըլլար:

Մտածելիք խիստ շահեկան նիւթ մըն է այս մեզի համար:

Դէպի ո՞ր կ'երթան իմ քայլերս:

ԱՄԵՆԱՄԵՆ ԳԻԻՏԸ

Բրօֆ. Սիմքսըփ որ կարգ մը վիրաբուժական գործիքներ հնարած էր և ծանօթ է մանաւանդ քլօրօֆօրմի գիւտովը, հարցուեցաւ «Ձեր գիւտերէն ամենամեծը ո՞րը եղած է»: Բրօֆէսօրը պատասխանեց. «Իմ ամենամեծ գիւտս հոգւոյս փրկութիւնը եղաւ: — Իմ մեղաւոր մը ըլլալու և Յիսուս Քրիստոսին իմ Փրկիչս ըլլալը գիտնալս: Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՀԻՆԳ ՔԻԼՈՄԵԹՐ ԵՐԿԱՅՆ ՔՍՐՈՋ ՄԸ

Մուտի յատուկ սէր մը ունէր հանդէպ մեծկակ Ս. Գիրքերու, որոնց գիրքերը խոշոր են: «Ես շատ չեմ սիրեր», կ'ըսէր ան, «այն փոքրիկ Ս. Գիրքերը որոնք կարդալու համար պէտք է քթին առջեւ բռնել: Ինծի պիտի ըսէք թէ մեծ Ս. Գիրք մը զրպանի մէջ կրել կարելի չէ: Շատ աղէկ, զայն թեւերնուդ տակ կրեցէք և եթէ հինգ քիլօմէթր պէտք է քալէք եկեղեցի երթալու համար, այն ատեն հինգ քիլօմէթր երկայն քարոզ մը պիտի խօսիք: Ես մարդ մը ճանչցայ որ ապաշխարած է, ուրիշի մը Ս. Գիրքը թեւին տակ կրելը տեսնելով»:



Երկիրք իր կուրծքը բացաւ, երկիր իր գիրկը՝
 Հօրը ծոցէն, Արշալոյսի զոգէն վար իջաւ լուսոյ
 Զաւակը յաւիտենական էակը ու Տիեզերքի
 Արարիչը:

Այսօր Սարօնը ծաղկած է լեռներուն վրայ
 մանանայ տեղացեր է ու դաշտերը ցօղով թըր-
 ջուած են: Հրեշտակները փառաբանութիւն կ'եր-
 գեն ու հրաշալի Աւետիսը կը հաղորդեն մարդ-
 կութեան: Ահա՛ յաւիտենական Արեւը ծագեցաւ՝
 խաւարի մէջ նստող ժողովուրդը լուսաւորելու:

Այսօր յայտնութեան Տօն է հզօր Աստուծոյն,
 Խաղաղութեան իշխանին ու Յաւիտենական Հօրը:

Տօն մը որ մեր սրտին ամենանուրը թելերը
 կը թրթռացնէ ու մեր հոգւոյն քնարը փառա-
 բանութեան նուիրական մեղեգքին կ'երգէ: Խոր-
 հուրդ մը որ մեզ 2000 տարի ետ կը տանի, նաև
 դէպի անվերջ յաւիտենականութեան:

Տօն է այսօր մոգերուն ալ որոնք Աստուծոյն
 առաջնորդուելով ճամբայ ինկան ու զացին
 լեռներ, ձորեր և անապատներ կտրեցին, կանգ
 առին, հարց ու փորձ ըրին, բայց վերջապէս
 գտան Մանկան մտուրը: Տեսան Յիսուս Մանուկը,
 խոնարհեցան, երկրպագութիւն ըրին Անոր, ըն-
 ծաներուն հետ մէկտեղ սիրտերնին ալ տուին.
 Թաղաւորն ու Տէրը գտած, ետ դարձան:

Դո՛ւք ո՛վ մոլորած ճամբորդներ, դարձուցէ՛ք
 ձեր երեսը դէպի Բեթլեհէմի զեղածիծաղ հորի-
 զոնը ուր մտուրը կայ. որուն մէջ պառկողը Խա-
 ղաղութեան իշխանը ու աշխարհի Փրկիչն ալ է:
 Ուրեմն եկէ՛ք ինծի հետ հոն երթանք, մենք ալ
 Տօն ընենք, հոն մտուրին առջև մեր սիրտը ջուրի
 պէս թափենք, երկրպագենք Անոր մեր էու-
 թեամբը, փառաբանենք զԱյն իր խանձարուրին
 մէջ, խոստովանինք Անոր, զղջանք մեր հպար-
 տութեանը վրայ ի տես իր խոնարհութեան և
 ծառայենք Անոր իր մեծութեանը մէջ: Փաթ-
 թուինք Անոր զօրութեանը, խնկարկենք Անոր
 Աստուածութեանը, պաշտենք զԱյն մեր բիւրե-
 դացած հաւատքովը: Ահա՛ այսը լլայ մեր «Ծնունդ»ի
 տօնական ուրախութեան գործնական կողմը:

ԱՆՆԱ. (ՊՕՂՈՅԵԱՆ) ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ
 ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
 SCOFFIELDԷՆ

Վ. ՍԱՀԱԿԻԱՆ

ՀԻՆ ՄԱՐԴԸ — ՆՈՐ ՄԱՐԴԸ

○○○○○

Առաքեալը կ'ըսէ. «Ո՛չ թէ առաջ հոգեւորը,
 հապա շնչաւորը, ու ետքը հոգեւորը» (Ա. Կոր.
 ԺԵ 46) և ինչ որ հոգ ըստւած է մարմինի յարու-
 թեան համար՝ նոյնը կը տեսնուի Աստուծոյ ամէն
 «անդնեկի ճամբաներուն» մէջ:

Դրախտէն վոնտուելէ յետոյ Եւա երբ Կայէնի
 ծնունդ տուաւ՝ գոչեց. «մարդ ստացայ Տէրոջ.
 մէջ», բայց քիչ յետոյ ան պիտի տեսնէր թէ
 առաջին ծնածը Կայէն շնչաւորին, երկրաւորին
 օրինակն էր: Կայէնի մէջ ամէն ինչ երկրաւոր
 է, շնչաւոր, ինքնակամ ու անձնարդար: Անոր
 կրօնքը բացարձակապէս զուրկ է մեղքի համո-
 զումէ և քաւութեան կարօտէն: Այս տեսակ կրօ-
 նականը նկարագրուած է Բ. Պետ. Բ գլխուն
 մէջ: Զայն եօթը բաներ կը յատկանշեն:

1. Անոր պաշտամունքը ինքնակամ կրօն-
 քով է:
2. Աստուծոյ հանդէպ բարկացած և զրժ-
 տուած է:
3. Նա կը մերժէ մեղքի պատարագ մը մա-
 տուցանել:
4. Նա իր եղբայրը (հոգեւոր) կ'ատէ ու
 զայն կ'սպաննէ:
5. Յետոյ նա Աստուծոյ սուտ կը խօսի:
6. Եւ կը դառնայ թափառաշրջիկ:
7. Բայց նա տակաւին Աստուածային հոգա-
 տարութեան առարկան է:

Կայէն կը հաւատայ Աստուծոյ մը և կրօնքի
 մը որ ինքնակամ է, կրօնք մը մանաւանդ որ
 արեամբ քաւութիւնը կը մերժէ: Եւ մինչ իբր
 կրօնքի ուսուցիչ նա ստիպուած է քաւութիւնը
 բացատրել՝ անսլիւն, ուխտազանց այն ուսու-
 ցիչը՝ իր ուսուցումովը մարդիկը քաւութեան
 արիւնէն կը հեռացնէ:

Արէլ ստոր հակառակը՝ հոգեւոր մարդուն
 օրինակն է՝ և մարմնաւորէն յետոյ կուգայ: Անոր
 ողջակէզը՝ որուն մէջ քաւական արիւն թափ-
 ուեցաւ՝ (Եբր. Թ 22). իր մեղքի խոստովանու-
 թեան և փոխանորդ-միջնորդ դասի մը վրայ իր

հաւատքին արտայայտութիւնն էր: (Եբր. ԺԱ 4):

Այս իրողութիւնը ի յայտ կուգայ Եսաւի սերունդին և Յակոբի սերունդին մէջ եւս: Ծննդ. ԼՁ 34ի մէջ կը կարգանք, «եւ ասոնք են այն թագաւորները որ Եղովմի երկրին մէջ թագաւորեցին, Իսրայէլի որդիներուն վրայ Թագաւորի մը Թագաւորելէն առաջ»: «Առաջ շնչաւորը ու ետքը հոգեւորը»: Առաջին բաները շնչաւոր են, մարդուն ամենէն աղէկները՝ և միշտ կը ձախողին: Երկրորդ բաները հոգեւոր են: Աստուծոյ բաները՝ և կը յաջողին: Այսպէս.

նախ Աւամ	— յետոյ Քրիստոս
» կայէն	» Աբէլ
» կայէնի սերունդը	» Սէթի սերունդը
» Սաւուղ	» Գաւիթ
» Իսրայէլ	» Ճշմարիտ եկեղեցին

Հին մարդը կրնայ բնականօրէն ազնիւ երեւցած բնաւորութիւններ ալ ունենալ: Այսպէս կ'երեւի բաղդատութիւնը Եսաւի և Յակոբի միջեւ: Եսաւ թէեւ Յակոբէ աւելի ազնիւ բնաւորութեան տէր ըլլալ կը թուի՝ «անսուրբ» կոչուած է Սուրբ Հոգւոյն կողմէ (Եբր. ԺԲ 16, 17) վասնզի զուրկ էր հաւատքէ, և անդրանկութեան իրաւունքը անարգեց, վասնզի այդ հոգեւոր բան մըն էր և միայն հաւատքով կարելի էր հասկցուիլ ու գնահատուիլ: Անդրանկութեան իրաւունքի հոգեւոր արժէքին հասկացողութիւնը՝ անկասկած դեռ մարմնաւոր և անբաւարար էր Յակոբի մէջ՝ բայց զայն ձեռք ձգելու համար իր ունեցած փոփաքը ճշմարիտ հաւատքի ապացոյցն է:

Եսաւի սերունդէն յառաջ եկաւ Ամադէկ: (Ծննդ. ԼՁ 12) Իսրայէլի և մանաւանդ Աստուծոյ թշնամին ազգէ ազգ. (Ելից ԺԷ 16, Գաղ. Դ 22-29), Իսկ Յակոբի սերունդէն յառաջ եկաւ Աստուծոյ ժողովուրդը և մանաւանդ, մարմնի կողմանէ, մեր օրհնեալ Տէրը Յիսուս Քրիստոս:

«Հին մարդ»ը Աստուծոյ խօսքին մէջ միշտ կը նշանակէ հին, ապականած մարդկային բնութիւնը, բնածին հակումը դէպի չարը բոլոր մարդոց մէջ: Հռով. Զ 6ի մէջ բուն ինքնին բնական մարդն է, մինչդեռ Եփես. Դ 22 և Կող. Դ 9ի մէջ անոր ճամբաները: Բարոյագիտական իմաստով մարմին բառը Սուրբ Գրքին մէջ լման բնական կամ աննորոգ մարդը կը ցուցնէ. հոգի, շունչ և մարմին, ամբողջովին անձին վրայ կեդրոնացած, մեղքին հակամէտ և Աստուծոյ հակառակ: (Հռով. Է 48):

«Դիրք»ի տեսակէտէն, Աստուծոյ համարումով, հին մարդը խաչուած կը հաշուուի՝ և հաւատացեալը կանչուած է այս օրհնութիւնը իրագործել

իր ամենօրեայ փորձառական կեանքին մէջ, այս «խաչուած»ութիւնը կատարուած սեպելով՝ որոշապէս և վճռականապէս «հին մարդը իր վրայէն մէկդի հանելով» և «նորը հագնելով» (Կող. Դ 8-14):

Նոր ծնանելու (Յովհ. Դ 3) անհրաժեշտութիւնը երեւան կուգայ բնական մարդուն Աստուծոյ թագաւորութիւնը «տեսնելու» կամ «անոր մէջ մտնելու» անկարողութենէն: Բնական մարդը՝ որքան ալ որ տաղանդաւոր, բարոյալից կամ կրթուած ըլլայ՝ տակաւին բացարձակապէս կոյր է հոգեւոր ճշմարտութիւնը տեսնելու, եւ անկարող է Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու, քանզի նա ոչ կրնայ հնազանդիլ Աստուծոյ, ոչ կրնայ հասկընալ զԱյն, ոչ ալ կրնայ Անոր հաճելի ըլլալ: (Յովհ. Գ 3, 5, 6, Սաղ. ԾԱ 5, Երեմ. ԺԷ 9 Մարկ. Է 21-23, Ա. Կոր. Բ 14, Հռով. Ը 7, 8 Եփես. Բ 3):

Նոր ծնունդը՝ հին բնութեան մէկ բարեկարգումը չէ. (Հռով. Զ 6) հապա Սուրբ Հոգւոյն միջոցաւ ստեղծագործական զործողութիւն մը. (Յովհ. Դ 5, Ա 12, 13, Բ. Կոր. Ե 17, Եփես. Բ 10, Դ 24):

Նորէն ծնանելու պայմանը խաչը ելած Քրիստոսի հաւատալ է. (Յովհ. Դ 14, 15, Ա 12, 13, Գաղ. Դ 24):

Նոր ծնունդին միջոցաւ հաւատացեալը Աստուածային բնութեանը և բուն ինքն Քրիստոսի կեանքին հաղորդ կը դառնայ, (Գաղ. Բ 20, Եփես. Բ 10, Դ 24, Կող. Ա 27, Ա. Պետ. Ա 23-25, Բ Պետ. Ա 4, Ա Յովհ. Ե 10-12):

Որդեգիր և որդեգրութիւն բառերը Սուրբ Գրքին մէջ ազգականական կապէ աւելի դիրքի և տարիքի հետ առնչաբար իմաստ ունի: Այսպէս՝ հայր մը իրմէ ծնած բուն իր զաւակը տղայ կը սեպէր մինչեւ որոշ տարիք մը՝ որմէ յետոյ զայն պաշտօնական արարողութեամբ կը որդեգրէր, այսինքն չափահաս կը սեպէր: Նոր ծնունդով Աստուծոյ զաւակ կ'ըլլանք, (Յովհ. Ա 12, 13) իսկ օրէնքին և աշխարհի սկզբունքներուն ծառայութեանէն ազատուելով չափահաս զաւակի որդեգիրի դիրքին մէջ կը դրուինք: (Գաղ. Դ 1-5, Եփես. Ա 5): Մեր մէջ բնակող Աստուծոյ հոգին այս որդեգրութեան իրականացումը կը կատարէ մեր ներկայ կեանքի փորձառութեան մէջ, (Գաղ. Դ 6): Բայց հաւատացեալին որդեգրութեան կատարեալ յայտնութիւնը (manifestation) կ'ապաստուրբեւուն և յափշտակութեան: Ասիկա «մեր մարմինին ազատութիւնը» «կամ ստացուածքին փրկութիւնը» կոչուած է: (Հռով. Ը 25, Ա թեո. Դ 14-17, Եփես. Ա 14, Ա. Յովհ. Դ 2):

Նոր կտակարանին մէջ որդի թարգմանուած երկու զլխաւոր բառեր կան. (1) *թէքնօն* — որ ալ աւելի զաւակի մը ծնանիլը, մանկութիւնը և պատանեկութիւնը կը ցուցնէ: (2) *Հիւրօս* — որ աւելի չափահաս զաւակի իմաստը կուտայ: Ամէն պարագայի՝ մեր ներկայ նիւթին հետ առնչարար ըսենք թէ՛ մինչդեռ որդի և որդիներ արտայայտութեան համար շատ յաճախ «թէքնօն» բառը գործածուած է, բայց ամէն տեղ, առանց բացառութեան «որդեպի» բառին մէջ «Հիւրօս» բառը գործածուած է: Նկատելի է նաեւ թէ միակ համարը որուն մէջ «թէքնօն» գործածուած է Յիսուսի համար՝ Ղուկ. Բ 48նէ՝ ուր Յիսուսի մայրը զայն «որդեակ» կը կոչէ: Ուրիշ ամէն տեղ՝ նոյնիսկ Յիսուսի ծնունդը և մանկութիւնը յիշող համարներու մէջ Յիսուսի համար «Հիւրօս» բառը գործածուած է:

Եփես. Ա. 3ի «Երկնաւորներուն մէջ Քրիստոսով» արտայայտութիւնը հաւատացեալին Քրիստոսի հետ միացման հոգեւոր փորձառութիւնն է՝ բնութեամբ (Բ. Պետ. Ա. 4), կեանքով (Կող. Գ 4, Ա. Յովհ. Ե 12): Ազգականական կապերով (Յովհ. Ի 17, Եբր. Բ 11) Ծառայութեամբ (Յովհ. Ժէ 18, Մատթ. ԻԸ 20), չարչարանքով (Փիլ. Ա. 29, Գ 10, Կող. Ա. 24), Ժառանգութեամբ (Հռով. Ը 16, 17) և ապագայ փառքով թագաւորութեան մէջ (Հռով. Ը 18—21, Ա. Պետ. Բ 9, Յայտն. Ա. 6, Ե 10): Հաւատացեալը երկնաւոր մարդ մըն է, և այս աշխարհի վրայ օտարական մը և պանդուխտ մը: (Եբր. Գ 1, Ա. Պետ. Բ 11):

Յովհ. Ժէ զլխուն մէջ Յիսուս 7 անգամներ (Հ. 2, 6, 9, 11, 12, 24) հաւատացեալներուն մասին կը խօսի իբր «Հօրմէն իրեն տրուածներ»: Յիսուս Քրիստոս ինքը՝ Աստուծոյ սիրոյ պարգեւն է աշխարհի տրուած (Յովհ. Գ 16, Բ Կոր. Թ 15), և հաւատացեալները Հօրը սիրոյ ընծան են Յիսուս Քրիստոսի:

Քրիստոս իրեն տրուած հաւատացեալները Հօրը ապահով պահպանութեանը կը յանձնէ, այնպէս որ հաւատացեալին ապահովութիւնը կը հանդիշ Հօրը իր որդւոյն Յիսուս Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատարմութեանը վրայ:

«Հին մարդը իր գործերովը ձեր վրայէն հանեցէք եւ հագէք այն՝ նորը գիտութիւնով նորոգուած իր Ստեղծողին պատկերին պէս»: (Կող. Գ. 9, 10):



ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷԻՆ ՄԱՅՐԸ

Ա.

Ամերիկայի Աւետարանական եկեղեցիները բարի սովորութիւնը ունին ամէն տարի Մայիս ամսուան մէջ Կիրակի մը յատկապէս «Մայրերու Օր»ը տօնելու: Եւ արդարեւ կ'արժէ տարին զոնէ անգամ մը լրջօրէն խորհրդակցիլ մայրութեան կարեւորութեան ու մայրերու արժէքին վրայով: Աստուածորդին անգամ՝ երբ աշխարհ եկաւ, «կնոջմէ եղաւ (ծնաւ)», (Գաղ. Դ. 4), «Մաւրիամի որդին» եղաւ (Մարկ. 2. 3): Սակայն անգամ մը մտածենք թէ Մարիամ մը պատրաստեալու համար Աստուած դարերով որքա՛ն աշխատանք թափեց Իսրայէլի ժողովուրդին վրայ: Ստուգիւ, ինչպէս Հէնրի Տրեմբնտ կ'ըսէ, «Մայրիկին հոլովոյթը» Աստուծոյ արարչագործական նախախնամութեան ամենամեծ հրաշակերտն է: Մեծն Նափօլիտնի անգամ մը հարցուցեր են թէ «Փրանսա ամենէն աւելի ի՞նչ բանի պէտք ունի». պատասխանած է, «Ճշմարիտ մայրերու»: Ամէն ազգի ու ժամանակի համար ճշմարիտ է այս խօսքը: «Կրթութիւնը պարտի օրօրոցէն սկսիլ» տիտղոսով զիբք մը կը ճանչնայինք մեր երիտասարդութեան ատեն: Խեղացի մարդ մը սակայն ըսած է թէ «Մանուկը իր ծնելէն չորս սերունդ առաջ պէտք է կրթել»: Մարդու մը նկարագիրը կազմելուն մէջ, իր ազատ կամքին գործածութենէն զատ, երկու տարրեր նկատի կուգան. նախ՝ արեան միջոցաւ ստացած ժառանգականութիւնը, երկրորդ՝ ընտանեկան միջավայր կամ մթնոլորտ, զոր ստեղծողը զլխաւորապէս մայրն է:

Եւ մարդոց մայրերը: Կրնան բացառութիւններ ըլլալ, բայց փորձառութեան վրայ հիմնուած ըլլալով, այլեւս սովորութիւն դարձած է մեծ մարդոց մեծութեան գաղտնիքը փնտռել իրենց մայրերուն քով: Ուստի կարծեմ չենք սխալիր, եթէ Մովսէս Մարգարէին ալ մեծութեան գաղտնիքը փնտռենք իր մօրը քով: Գեղեցիկ ու շահեկան, նաեւ հոգեւորապէս օգտակար ուսումնասիրութիւն մըն է Սրբազան Պատմութեան մէջ յիշուած կիներու նկարագիրները սերտել: Անոնց մէջ, պատմականապէս ամենակարեւոր տեղը կը բռնէ Մովսէսի մայրը Յոբաբէդ, որուն վրայ սակայն մեր կենսագրական ծանօթութիւնը

խիստ քիչ է դժբախտաբար: Բայց մեր գիտցած քիչն ալ շատ հետաքրքրական լոյս կը սփռէ Մովսէսի անձին ու դարին վրայ:

Մովսէսի հայրն էր Ամրամ, որու մասին կը կարդանք թէ «Ղեւիի տունէն մէկը զնաց, ու Ղեւիի մէկ աղջիկը կին առաւ» (Ելից. Բ. 1): Առած կինը իր հօրաքոյրն էր (Ել. 2. 20, Թու. Ի. 2. 59): Ասի առաջին նայուածքով շատ դարմանալի կը թուի մեզի. բայց նախ, այդ ժամանակ, օրէնքը դեռ չգրուած, արգիլեալ չէին մօտաւոր ազգականներու մէջ այս տեսակ ամուսնութիւնք. երկրորդ, հաւանօրէն Յոքարէդ Ամրամի հօրը կահաթի մէկ խորթ քոյրն էր, և ասկէ գատ՝ հարկ չէ խորհիլ թէ Յոքարէդ Ամրամի հօրաքոյրն ըլլալով տարիքով մեծ էր անկէ. ընդհակառակն անիկա հաւանօրէն Ամրամի պապուն մէկ երկրորդ կնոջմէն ծնած ըլլալով՝ թերեւս իրմէ պզտիկ էր: Սակայն բուն բանը սա է որ Մովսէսի երկու ծնողքն ալ միեւնոյն Ղեւիի ընտանիքէն էին: Ասոր մէջ նախախնամական շատ գեղեցիկ կարգադրութիւն մը կար: Մովսէսի ծնողաց նկատմամբ չունինք ուրիշ մանրամասնութիւններ, որ լոյս տան անոնց նկարագրներէն: Բայց անկէ իսկ կրնանք հետեւցնել թէ անոնք շեղմ կրօնաւէր, զօրաւոր հաւատքի տէր անձինք էին, պարզ կենցաղով, իրարու և զաւակներուն հանդէպ գորովագութ, նաեւ շատ խոհեմ և ուշիմ իրենց բոլոր վարմունքներուն մէջ: Ասկէ գատ, յետագայ պատմութեանքներէն կը տեսնենք որ ընտանիքին բոլոր անդամներն ալ գեղեցկութեան մասին նշանաւոր էին, ինչպէս նաեւ երկարակեցութեան կողմանէ:

Յոքարէդ անուան նշանակութիւնն է «որուն փառքն է Եհովա»: Եհովա անուան արմատովը բարդուած անձի անուններուն մէջ մեզի ծանօթ առաջինը Յոքարէդինն է: Ասոր կարեւորութիւնը շատ մեծ է կրօնապատմական տեսակէտէն, Արդի քննադատներէն շատեր խորհած են թէ Մովսէս նախ Մարիանացոց քուրմէն սորվեցաւ Եհովայի անունը: Բայց սխալ ըլլալու է այս կարծիքը, որովհետեւ ահա այդ անուան արմատովը բարդուած է արդէն Մովսէսի մօրը անունը, ուրկէ առանց տարակոյսի կարելի է հզօրակացնել թէ Եհովայի անունը նախապէս ալ ծանօթ էր Իսրայելացոց, գոնէ Ղեւիի ընտանիքին մէջ: Եւ այս անուան հետ միասին կ'ընթանայ նաեւ աներեւոյթ, մէկ ու յաւիտեական ճշմարիտ Աստուծոյ գիտութիւնը:

Մովսէս իր ծնողքէն, մանաւանդ մօրմէն, ի'նչ ընտիր յատկութիւններ ժառանգեց: Ահարոն, Մովսէսի եղբայրն, իրմէ երեք տարի մեծ (Ել. Է. 7), պերճախօս մէկն էր (Ել. Դ. 14), նաեւ ինչպէս ոսկի հորթին ձուլման պատմութենէն կրնանք տեսնել՝ հանճարեղ ու հնարագիւտ արուեստագէտ մը (Ել. ԼԲ. 4): Ս. Գիրքը մէկ քոյր միայն կը յիշէ Մովսէսի.— Մարիամ: Ուստի Ելից երկրորդ գլխուն մէջ յիշուած քոյրն ալ նոյն Մարիամը պիտի ըլլայ, ուրեմն հարկաւ Մովսէսէն աւելի մեծ էր ան ալ, և այն ատեն գոնէ եօթը կամ ութ տարեկան: (Թէյլը կը կարծէ թէ առնուազն ինը տարեկան կար Մարիամ այն ատեն, իսկ Կիիքի՝ տասուերկու տարեկան կ'ենթադրէ): Բայց ի'նչ խելացի, վարպետ աղջիկ է ան, ի'նչ գորգուրոտ ուշադրութեամբ կը հսկէ գետին վրայ ձգուած երախային, ո'րչափ հաւատարիմ է իր պահապանութեան պաշտօնին, ի'նչ աչքը բաց, համարձակ աղջիկ է, որ գիտէ երկաթը տաք տաք ծեծել, ի'նչպէս կը համոզէ Փարաոնի դուստրը և կը յաջողի երթալ իր մայրը, երախային բուն մայրը կանչել իբրեւ սանտու այդ մանկան, որով թէ' տղան ապահով կ'ըլլայ մեռցուելէ և թէ' մայրը իր իսկ տղան դիեցնելուն փոխարէն վարձք ալ կը ստանայ: Իսկ ետքէն կը կարդանք թէ Մարիամ մարգարէուի մըն էր նաեւ (Ել. ԺԵ. 20): Կիօրկ էլպէրզ նշանաւոր գերմանացի հեղինակը, Ս. Գիրքի ճշմարիտ հաւատացեալ մը ու միանգամայն առաջնակարգ Եզրպտաբան և վիպասան, շատ հաւանական կը գտնէ թէ Յուդայի ցեղէն մեծ իշխան Ովրը (Ել. ԺԷ. 10, ԻԴ. 14) Մովսէսի քեռայրն էր, Մարիամի ամուսինը: Եւ ահա կը տեսնենք թէ Տէրը միեւնոյն Ովրի որդւոյն Ուրիի որդին Բեսելիէլը (այսինքն Մարիամի թոռը) կը կանչէ անունովը, վկայութեան խորանին և ուխտի տապանակին գեղարուեստական կերտուածքները շինելու, որովհետեւ Աստուծոյ Հոգին զանի լեցուցած էր «իմաստութիւնով, հանճարով ու գիտութիւնով և ամէն կերպ ճարտարութիւնով, որպէսզի վարպետի գործեր հնարելով ոսկիի և արծաթի ու պղինձի վրայ բանի, և զամէլու համար քարեր բանելով ու փայտեր քանդակելով՝ ամէն կերպ վարպետի գործ ընէ»: (Ելից. ԼԱ. 2-5, ԼԵ 30-33): Այսպէս, Ամրամի և Յոքարէդի ընտանիքին մէջ բարեպաշտութիւնը, անտեսանելի, մէկ ու ճշմարիտ Աստուծոյ հաւատքն ու պաշտամունքը, միացած էր գրական բարձր տաղանդի և գեղարուեստական ձիրքի հետ:

Ահա հանճարներու համաստեղութիւն մը կազմող ընտանիք մը: Հոն խնամքով պահպանուած էին Աբրահամի, Իսահակի, Յակոբի և Յովսէփի սրբազան աւանդութիւնները և նահապետներուն հետ Աստուծոյ դրած ուխտին ու խոստմունքներուն յիշատակը — օրհնեալ յիշատակներ: Հոն կը պահպանուէր Յովսէփի մահուան ատեն հաւատքով ըրած կտակը մարգարէական:

Հոն կը պահպանուէին անշուշտ աւելի հին յիշատակներ ալ, ստեղծագործութեան, մարդու անկումին, համաշխարհային ջրհեղեղի, աշտարակաշինութեան կայլն: Ասոնց բոլորը, միաստուածութեան սուրբ հաւատքով մաքրագործուած, թանկագին հրեայի մըն էր Իսրայէլի ժողովուրդին և բոլոր աշխարհի համար: Ընարուած ու մաքուր տոհմ մըն էր Ղեւի տունը, ուր մենք կը գտնենք հաւատքի, բարոյականի և ընտանեկան սրբութեան համար սաստիկ նախանձախնդրութիւն. արդարեւ երբեմն մոլեռանգութեան աստիճանին տարուած, ինչպէս կը տեսնենք զորօրինակ Դինայի առեւանգման զէպքին մէջ, երբ Շմաւոն ու Ղեւի դուով սուրէ անցուցին Սիւքեմի մարդիկը (Ծնն. Դ 25-30), որուն համար ալ նզովք ստացան իրենց հօրմէն, Յակոբէն, անոր մահուան անկողին մէջ (Ծնն. Խթ 5-7):

Բայց անկէ ի վեր անցնող դարերու միջոցին այդ նախանձախնդրութիւնը տառապանքի բովին բոցերուն մէջ չտաքցաւ ու դարձաւ սրբագործուած հոգեւոր նախանձ մը: Այս միջոցաւ էր որ Յակոբի արտասանած անէծքը Ղեւի ցեղին համար օրհնութեան փոխուեցաւ (Բ. Օր. ԼԳ. 8-11):

Վեր. Ե. ՔԱՍՈՒՆԻ

(Շար.)



ՊԱՏԱՆԵԱՑ

ՏԻՊԱՐ ԴԵՄՔԵՐ

ԵՂԻՍԷ

Եղիսէ մարգարէն ալ մեզի իբր տիպար կը կենայ Ս. Գրքի էջերուն մէջ: Անոր կը հանդիպինք առաջին առթիւ գեղեցիկ գործի մը վրայ: Իր հօրը արտը կը վարէր տասներկու զոյգ եղունենալով իր առջեւ (Գ. Թագ. ԺԺ 19-21): Իր զօրեղ նկարագրին բարձրութիւնը առաջին

վայրկեանին իսկ յայտնի է. — երկոտասաներորդին հետ էր կ'ըսէ Աստուծոյ խօսքը (հմր. 19) այսինքն արդէն տասներմէկին վրայ հսկած էր և ամենէն վերջին ահօսը ինք կը գծէր, անկէ վերջը եկողին իրենին քովէն և յար ու նման ընելու յորդորով: Եղիսէ յարեւանցի կամ մակերեսային գործ ընել չէր սիրեր և չէր ըներ: (Սորվէ ասիկա): Եղիսէ աշխատասէր պատանի մըն էր. բնաւ գործելէ չէր խորշեր: Մեծ հողատէրի մը զաւակն ըլլալով ամօթ չէր սեպեր աշխատիլ. ու թէ և գիտէր թէ հողագործութիւնը իրեն կեանքի գործը չպիտի ըլլար, սակայն Աստուծոյ կ'սպասէր և սպասելով ալ իր ձեռքը եղած օրուան «գործը բոլոր ուժովը» կ'ընէր (Ժող. Թ 10):

Այսպիսի մարդիկ, որոնք կ'սպասեն գործի մը սկսելու, մեծաւ մասամբ օրեր և շաբաթներ կը կորսնցնեն անգործ, կ'ըլլան ծոյլ և անհամբեր, ջղային և անհանդուրժելի, բայց Եղիսէ ո՛չ. իր գործը Աստուծոյ յանձնած էր և Տէրջը սպասելով աւելի կը զօրանար, իր օրուան զբաղումները բոլոր սրտովը կ'ընէր և կ'ըլլար օր ըստ օրէ պողպատէ կամքով զօրաւոր երիտասարդ մը:

Զօրաւոր նկարագիրներ արագ վճռող կ'ըլլան: Եղիսէի կեանքին մէջ չկայ զէպք մը, ուր նա երկընտրանքի մէջ գտնուէր կամ վարանէր իր որոշման կամ ըսելիքին մէջ: Երբ Եղիսէ մարգարէն անոր քովէն անցնելով իր հանդերձը անոր վրայ կը ձգէ, Եղիսէ առանց երկխորհուրդի կ'ըսէ — հրաման տուր որ երթամ հայրս ու մայրս համբուրեմ ու քու ետեւէդ գամ: Ուրեմն վճռող վայրկեանական տրուած էր, սակայն կար որդիական պարտականութիւն մ'ալ յարգանքի և խոնարհութեան առ ի ծնողս, որուն մէջ թերանալ չէր ուզեր, այս ալ Եղիսէի հրամանով: Տէրը կ'արտօնէ իրեն:

Արագ վճռող մըն էր Եղիսէ, բայց ճիշդ կը վճռէր, և ինչ որոշում որ տար, անոր մէջ հաստատմիտ էր, և կը քալէր համբերութեամբ ու յարատեւութիւնով իր գտած ճամբուն մէջ, առանց աջ կամ անհակ դառնալու: Կարգա մասնաւորապէս Դ. Թագ. Բ 1-14 (Տէրը կենդանի է ու քու անձը կենդանի է, որ ես քեզ չեմ թողուր):

Դիտէ թէ պողպատեայ կամքեր խիստ ու անողոք կ'ըլլան — Մուսօյինի, Հիթլէր, Սթալին — Սակայն Եղիսէի պողպատեայ նկարագիրը ամենօրեայ երկնային ցօղով թրջուած և թրգուած էր, նա հակառակ զօրաւոր կամքին խոնարհ մարդ մըն էր: Այս խոնարհութեան գիծը իր

կեանքի բոլոր օրերուն մէջ յայտնի է: Եղիայի աշակերտ — ձեռքը ջուր լեցնող կը կանչուի, և խոնարհութեամբ կ'երթայ: Եղիայի թշնամիները շատ էին, անոր կեանքը միշտ վտանգի տակ էր: Աղէկ, ուրեմն իր կեանքն ալ վտանգի մէջ թող ըլլար, բաւ էր որ ինքը գիտէր թէ Աստուծոյ կամքը կը կատարէր: Եղիսէ Քրիստոսի համար քնաս սեպեց ամէն ինչ որ իրեն համար շահ կ'երեւէր: Ինքը պէտք էր ցածնար և Քրիստոս բարձրանար:

Եղիսէ իր զօրաւոր նկարագրով միասին նաև քաղցր էր, յատկութիւն մը, որ այդ նկարագիրներու մէջ քիչ կը գտնուի: Քաղցր ո՛չ միայն իրեններուն, այլ նաև իր թշնամիներուն հանդէպ:

Սիրելիս, կարգա՛ Դ. Թագ. Բ—Թ 3, և ԺԳ 14—23 և ներշնչուէ՛ այդ Աստուծոյ մարդուն կեանքէն:

Եղիսէի կեանքը եղաւ օրհնութեանց և բժշկութիւններու շարք մը, բոլոր դասակարգերու համար:

Անիկա իր յատկութիւններով Տէր Յիսուսի չին կտակարանի ամենափառաւոր շուքերէն մին է: Ուսումնասիրէ այդ կեանքը ու ներշնչուէ, քանզի քեզի ալ կարելիութիւն կայ Աստուծոյ մէկ սուրբ մարդը ըլլալ (Դ. Թագ. Դ 9):

XXX

ԱՐԾԱԹԷ ԼԻՃ


Հիւսիսային Ամերիկա, Ֆլորիտայի թերակղզիին մէջ լիճ մը կայ որուն յատակը արծաթի աւազով ծածկուած է, այս պատճառաւ Արծաթէ լիճ կը կոչուի: Այս լիճին վրայ ճամբորդող մարդու մը յիշեցին թէ լիճին յատակը արծաթի աւազով ծածկուած է: Ճամբորդը երկար ատեն նաւէն նայեցաւ, բայց բան մը չտեսաւ: Անոր ըսին «յարատեւ նայէ» վերջապէս երկար ատեն յարատեւութեամբ նայելէն վերջ նա ուրախութեամբ ըսաւ «հիմա արծաթը տեսայ»:

Աստուծոյ խօսքը սերտելու մէջ ալ խնդիրը նոյնն է: Անոր վրայէն յարեւանցի, անցնելով Աստուծոյ խօսքին փառաւորութիւնը չենք կրնար տեսնել: Բայց խօսքը յարատեւութեամբ ամէն օր կարգաւ — Անոր մէջը երկար ատեն և խորապէս նայէ, անոր մէջ ոչ միայն արծաթ, հապա սակի և գոհարներ պիտի գտնես:

Ո՛վ Տէր, բաց մեր աչքերը որ քու օրէնքէդ հրաշքներ տեսնենք:

Ժ. Կ. Պ.

ՔԵԶՄԷ ՈՒՐԻՇԸ ԶԵՄ ՈՒՋԵՐ



«Ո՛վ ունիմ ես երկինքի մէջ, երկրի վրայ ալ Քեզմէ ուրիշը չեմ ուղեր»:

Սաղ. 53 : 25



Եթէ երբէք բանտարկեն մանուկ մ'առանց իրեն մօր, Ոչ նըկուղի մ'այլ հսկայ զըղեակի մէջ փառաւոր, Թող տան անոր, մօրմէն գատ՝ հոն ինչ որ կայ գեղանի, Այդ մանուկը անհաղորդ՝ կարօտին մէջ կը մեռնի'...

Ու փորձեցէք զայն նետել մօրը հետ վիհ մ'անարե՛ Ուր գուցէ շատ արցունքով պիտի ապրի հե ի հե, Բայց մանուկը անկասկած կ'ընտրէ վիրաւ մօրը հետ, Քան առանց մօր՝ մարմարեայ ապարանքը արփաւէտ:

Հոգին մանուկ մ'է անմահ, ծընած Հօրմէն երկնաւոր, Ուր ալ ըլլայ, և կամ ինչ վիճակի մէջ բաղդաւոր՝ Առանց Անոր կը դողայ դժոխատանջ կսկիծով...

Բայց երբ հոգին Աստուծոյ, և Աստուած ալ հոգիին կապուած են պինդ՝ ինչպէս հայր մ'ու իր որդին կաթողին, Ի՞նչ փոյթ նոյն իսկ եթէ զայն նետեն յատակը ծովուն:

ՍԱՄՈՒԷԼ Պ.





ՄԱՆԿԱՆՑ

ԾՆՈՒՆԴԻ ԱԳՈՒՍԻԸ

Ծնունդի նախորդ օրն էր: Ծառերը, տանիքներն ու մեծ քաղաքին փողոցները սպիտակ ձիւնով ծածկուած կը պսպղային ելեքարակաւ գոյնզգոյն լոյսերու ազդեցութեան տակ: Ամբողջ քաղաքը մեծ եռուզեռի մէջ էր: Բանուկ ճամբաներն ու պողոտաները դանդաղահոս գետերու երեւոյթը ունէին անհամար մարդոց երթեւեկէն: Խանութներն ու փարթամ վաճառատունները, որոնցմէ մեծ մասը Ծնունդի ծառեր զարդարած էին իրենց ցուցափեղկերուն մէջ, կարծես իրենց կը քաշէին գնորդները և նոյնիսկ բնաւ բանի մը պէտք չունեցողները, այնքան անոնց երեւոյթը շողշողուն ու փառաւոր էր: Հաբիւրաւոր մարդիկ շուկայ իջած էին միմիայն ցուցադրուած հրաշատեսիլ խաղալիքներն ու նուիրուելու սահմանուած առարկաները գիտելու համար: Անոնք տաք հագուստներու մէջ պատսպարուած՝ բանի տեղ չէին գնար ցուրտը և ընդհանուր սղուորութեան ու տօնական մթնոլորտին մէջ գոհունակ ու երջանիկ երեւոյթ մը կը պարզէին:

Սակայն մինչ ժամերը կը սահէին, գիշերը կը յառաջանար, փողոցներու բազմութիւնը հետզհետէ կը քաշուէր իրենց տուները, ուր ճոխ ու զարդարուած սեղաններ իրենց կը սպասէին: Վաճառատուններն ալ կամաց կամաց փակուիլ սկսան, մինչեւ որ ճամբաները զրեթէ ամայացան ու սկսան: զարծեալ փայլիլ կոխկոտուած ձիւնին ճերմակութեամբ: Շատ մը տուններու մէջ մօտաւոր ազգականներ ու բարեկամներ ի մի խմբուած ու մեծ սեղաններու կամ շքեղ Ծնունդի ծառերու շուրջ բոլորուած տօն կը կատարէին ազմիակից ու զուարթ: Ամէն տեղ առատութիւն, երգ, նուագ, ծափ ու ծիծաղ կար զրեթէ այդ իրիկուն: Քաղաքին հեռավոր մէկ անկիւնը, խեղճուկ երեւոյթով խրճիթ մը կար միայն որ որեւէ կերպով չէր կրնար մասնակցիլ այդ ընդհանուր տօնակատարութեան: Հոն, ողորմելի սենեակի մը մէջ կծկուած էին որբեւարի կին մը և իր երեք փոքրիկները: Սենեակին մէկ անկիւնը

կրակատեղիի մը մէջ տարտամ կերպով կը փայլէին մի քանի վառած փայտեր, որոնք ոչ մէկ կերպով սենեակը տաքցնելու յաւակնութիւնը չունէին: Մէջտեղը դրուած էր սեղան մը, որուն վրայ պատառ մը չորարեկ հաց անգամ չկար: Խեղճ կինը նոր լրացուցած էր Քրիստոսի հրաշալի մարդեղութեան ու ծննդեան պատմութիւնը, մասնաւորապէս շեշտելով Ասոր՝ երկինքի փառքը ձգելով խեղճուկ մսուրի մը մէջ աղքատիկ վիճակով ծնելու պարագան: Փոքրիկները անգամ մըն ալ հրացիկ ակնարկներով մտիկ ըրած էին սքանչելի մանրամասնութիւնները Բեթլեհէմի գիշերուան անցուղարձերուն, յետոյ միասին աղօթած էին ու յետոյ լռած: Դժբախտ մայրը չէր գիտեր թէ ալ ի՞նչ խօսէր, ու իր կարգին կծկուած էր անխօս: Ժամանակ մը այսպէս անփառ:

Յանկարծ պզտիկներէն երիցագոյնը ըսաւ իր մօրը.

— Մայրիկ, չէ՞ որ դուն շատ անգամ կարդացած ես Ս. Գիրքին մէջ այն գեղեցիկ պատմութիւնը, որ Տէրը ազոռի մը կը հրամայէ որ Եղիային հաց ու միս տանի: Եթէ ես ալ Աստուծոյ ազալեմ որ մեզի ալ այդպիսի ազոռ մը ղրկէ, կ'ընդունի՞ արդեօք:

Կինը վարանեցաւ վայրկեան մը, յետոյ պատասխանեց.

— Կը կարծեմ թէ այո՛, եթէ դուն ալ վստահաւատք ունենաս այդ բանին համար:

Փոքրիկը խկոյն քովի սենեակը գնաց ու ծունկի վրայ գալով աղօթեց. «Տէր Յիսուս, այս իրիկուն մեզի ալ աչոռ մը ղրկէ ինչպէս որ Եղիային ղրկեցիր, որպէսզի մեզի քիչ մը ուտելու բան բերէ: Կը խնդրեմ ո՛վ Տէր Յիսուս Ամէն:» Յետոյ գոհունակ սրտով վերադարձաւ մօրը քով, համբուրեց զայն և ըսաւ որ չի լայ, ու գնաց տան դուռը լայն բանալով առջեւը կեցաւ ձեռքերը ծալած, ու սպասեց իր աղօթքի պատասխանին: Ժամը տառն էր արդէն, փողոցին մէջ երթեւեկ չկար: Վերջապէս ոտքի ձայներ լսուեցան հեռուէն և Պարոն մը մօտեցաւ որ կ'անցնէր, բայց զբան առջեւ այդ պահուն պզտիկը տեսնելով հարցուց թէ ի՞նչ կ'ընէր հոս:

— Ազոռսին կը սպասեմ որ մեզի հաց բերէ այս իրիկուն:

— Ազոռսին... ի՞նչ ազոռ: Ու մարդը մօտենալով մտաւ ներս:

Հէզ կինը շփոթեցաւ ու որպէս բացատրութիւն ստիպուեցաւ պատմութիւնը պատմել:

Մարդը, որ քաղաքին մէկ պաշտօնեան էր, ար-
ցունքները չկրցաւ գտալ:

— Արդարեւ ես ալ ազոաւի մը կը նմանիմ
քիչ մը իմ սեւ հագուստներովս ըսաւ: Անտարա-
կոյս Աստուած գիտ է որ կը զրկէ: Ուրեմն կողով
մը առ ու ետեւէս եկուր:

Պզտիկը վերադարցաւ սակառ մը լեցուն ու-
տելիքով ու ազադակեց հիացած:

— Կը տեսնե՞ս, մայրիկ, թէ Աստուած ինչպէս
պատասխանեց ազօթքիս:

Յ. Բ.

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէտէկոստէ մը Մատակասքարի մէջ

ՎԵՐԱՊՐՈՂ ՈՍԿՈՐՆԵՐ

Վօթօմօտրի որ պառկած քար կը նշանակէ,
Մատակասքար գտնուող գիւղի մը անունն է: Այս
գիւղին բողոքական փոքրիկ համայնքը երկար
ժամանակ ու եւ է կեանք ցոյց չտուաւ, բացի իր
ծովագերքը Հնդկական օվկիանոսին մէջ պառկած
քարերէն: Միսիոնարներ, իրենց տարեկան այ-
ցելութեանց մէջ կը հաստատէին թէ՛ տեղւոյն
եկեղեցին գործունէութենէ զուրկ, թմրած վիճակ
մը ունի և թէ՛ դրացի ժողովուրդը բոլորովին
հեռացած կ'ապրէր եկեղեցիէն:

Ի՞նչ մեծ կ'ըլլայ զարմանքը այն միսիոնա-
րին երբ 1919ին այդ կողմը այցելած պահուն
տասնըրկու Մատակասքարցիներու կողմէ ջերմ
ընդունելութիւն կը գտնէ որոնք կը հարցնեն
իրեն թէ արդեօք տեղւոյն բոլոր եկեղեցիներն
ալ այցելելու դիտաւորութիւն ունի: «Բոլոր...
կը բացառանք միսիոնարը ապշած, բայց հոն
միայն մէկ եկեղեցի կայ, ես միայն մէկ օր
պիտի մնամ հոս»: «Ըսել է դուք այս վերջին
ամիսներուն մէջ ոչինչ չէք իմացած հոս տեղի
մասին: Ո՛չ թէ մէկ այլ 15 եկեղեցիներ պիտի
այցելէք: Մենք իբր պատուիրակութիւն եկանք
խրաքանչիւր եկեղեցիի կողմէ խնդրելու ձեզմէ
որ զաք և այցելէք մեր գիւղերը, որոնք դեռ նոր
ընդունած են Աւետարանը և պէտք ունին հա-
ւատքի զօրացման: Անոնք իրենց կուռքերը քան-
դած՝ Կենդանի Աստուածը կը պաշտեն: Կան ու-

րիշներ որոնք յորդորի պէտք ունին, սրպէսզի
այս առաջիններուն օրինակին հետեւին»:

Հետեւեալ տարին երբ միսիոնարը վերստին
կուգայ, ուրախութեամբ կը տեսնէ թէ 13 եկեղե-
ցիներու տեղ 25 եկեղեցիներ կան միևնոյն
վայրին մէջ:

Ի՞նչ հիանալի բան, քսանըչորս եկեղեցիներ
2 տարուան ընթացքին, մինչ 10 տարիներու
ընթացքին Վօթօմօտրի պզտիկ եկեղեցին բոլոր-
ովին ամուլ մնացած էր: Ի՞նչ էր պատահած:

Երկու տարի առաջ, երկու գիւղացիներ իրա-
րու կ'ըսեն. «Տէրոջ Աշակերտները» գիւղ եկե-
ր են: Հետեւեալ օրը ժողովի կ'երթան ուր «Տէրոջ
Աշակերտներէն» կը խնդրուի որ ելլեն խօսին:
Անոնցմէ մին ոտքի կ'ելլէ ու կը հարցնէ. «Քանի՞
տարիէ ի վեր գոյութիւն ունի ձեր եկեղեցին»:
«Երկար ժամանակէ ի վեր» կը պատասխանեն
հպարտութեամբ: «Եւ ի՞նչ է ըրած իր շուրջը
դառնող գիւղերուն Աւետարանը տարածելու
համար... քանի՞ եկեղեցի կայ ձեր շրջանին
մէջ... Ինչպէ՞ս չէք ըմբռնած այն մենաշնորհը,
որ Աստուած ձեր եկեղեցիին իբր լոյս, պարտա-
կանութիւն տուած է, որ այս խաւար տեղւոյն
մէջ միջոց ըլլաք շատ աւելի մեծ թիւ մը
փրկութեան առաջնորդելու»:

Հոգաբարձուներէն մին ոտքի կ'ելլէ. «Ինչ որ
կ'ըսէք, մեզի համար նորութիւն մը չէ, մենք
յաճախ լսած ենք մեր միսիոնարներէն միևնոյն
բանը, բայց երբեք չենք պատասխանած իրենց
կոչին»: Ամբողջ ժողովը խիստ կը յուզուի ու
ամէնքը միասին ոտքի կ'ելլեն, կ'ազօթին, կը
խոստովանին իրենց սխալները, կը խոնարհին
ու կը զղջան և ամէնքն ալ կը տրամադրեն
ինքզինքնին «Տէրոջ Աշակերտներուն» ընկերա-
նալու և բոլոր գիւղերը քարոզելու:

Բայց ո՛ւրկէ յառաջ եկած է այս «Տէրոջ Ա-
շակերտներու» խումբը:

Երեսունը հինգ տարիներ առաջ, Վօթօմօտրիէն
բաւական հեռու տեղ մը, գինով վհուկ մը Ռէ-
նիովալամպօ, կ'ապաշխարէ և Աստուածաշունչը
կարդալ կը սորվի: Մի քանի տարիներ լուռ
ամփոփումէ մը վերջ 12 մարդիկ կը ժողվէ, ա-
նոնց Աւետարանը կը ճանչցնէ և ազօթել կը
սորվեցնէ: Իր ընտանիքը մեծ փորձութեանց
կը մատնուի հիւանդութեանց և սուգի պատճա-
ռաւ: «Օր մը», կը պատմէ. «վերէն ձայն մը լսեցի
որ կ'ըսէր, Ազօթէ քուկիներուդ համար և պիտի
բժշկեմ զանոնք»: Կինը կը հնազանդի և պա-

ԲԱՆՔԵՐ

Նոր Տարուան առթիւ
իր սրտագին մաղթանքները կը ղրկէ
իր սիրելի ընտանիքի իւրաքանչիւր
անդամին:

տասխանը կ'ընդունի: Ասիկա իր մէջ ծագում
կուտայ մեծ և նոր զործունէութեան մը և կը
սկսի յամառօրէն քարոզել:

Իր բարեկամները օրէ օր ալ աւելի կը հետե-
ւին իրեն և այսպէս «Տէրոջ Աշակերտներ» կոչ-
ուած միութիւն մը երեւան կուգայ և թանկագին
ազգակ մը կը հանդիսանայ միախօնարութեան
կողքին:

Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ:

(Թարգմ.)



ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԵՐԻ ԾԱՒԱՂՈՒՄԸ.—

Ս. Գրային ընկերութեան տարեկան ժողովի
վերջին տեղեկագրէն կը քաղենք այս քանի մը
մանրամասնութիւնները, որոնք կը յաւանք թէ
մեր ընթերցողները պիտի հետաքրքրեն:

«Ուրախ ենք որ անցեալ տարի Ս. Գրքին
մէկ մասը 6 նոր լեզուներու թարգմանուեցաւ,
այնպէս որ Ընկերութեանս կողմէ հրատարակ-
ուած Ս. Գրային մասերը 711 լեզուի կը հասնի:
Ս. Գրքի տանը մէջ օրինակներ ունինք 997 տար-
բեր լեզուներու, որոնց Աստուածաշունչը թարգ-
մանուած է և մենք կ'սկսածի նշոյլն իսկ չունինք
թէ զալիք տարուան մէջ 4000ի պիտի հասցնենք»:

Որքա՛ն յառաջացում 1804էն ի վեր, այսինքն
Ընկերութեան հիմնադրութեան տարիէն, որ ա-
տեն Ս. Գիրքը թարգմանուած էր ամբողջութեամբ
կամ մասերով 55 լեզուի: Իր զոյւթիւնէն ի վեր
Ընկերութիւնը ծախած կամ ցրուած է 46 միլիոն
Ս. Գիրք կամ Ս. Գրային մասեր:

Ս. Գրային Ընկերութիւնը կոյրերը մոռցած
չէ. անիկա կը հրատարակէ կոյրերու զրով
ապուած 40 տարբեր լեզուներով Ս. Գիրք: Անդ-
լիական տպագրութիւնը կը բաղկանայ 39 հա-
տորներէ և կը կազմէ 5000 էջ:

(Notre Esperance էն)

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԱԶԱՅՈՒԹԻՒՆ.—

Ուրախ ենք ըսելու որ անցեալ տարուան
Յունուարի թիւին մէջ ըրած մեր ծանուցումը
լաւ ընդունելութիւն գտած է ընթերցողներու
շրջանակին մէջ: Անցեալ տարուան 30 հոգիները
իրենց «Բանբեր»ները ընդունած են նուիրատու-
ներու կողմէն:

Նոյն անձերը նորէն կը ներկայացնենք, յու-
սալով որ անոնց բաժնեգիրը վճարել ուզողներ
կարելի եղածին չափ շուտով մեզի պիտի տեղե-
կացնեն:

«Բանբերի պէտք ունին.—

1. Հոգեւոր գործաւոր մը

2. » »
3. » »
4. » »
5. » »
6. » »
7. » »
8. » »
9. » »
10. » »

11. Ծերունի քոյր մը

11. » »
12. » »
13. » »
14. » »
15. » »
16. » »
17. Ծերունի եղբայր մը
18. » »
19. Ընտանիքի տէր քոյր մը
20. » » հայր մը
21. Հիւանդանոց մը
22. » »
23. Թոքախտաւոր եղբայր մը
24. » քոյր մը
25. Երիտասարդաց Ընկերութիւն մը
26. Երիտասարդուհեաց » մը
27. Ֆրանս. բանակի մէջ հայ զինուոր մը
28. » » » հայ կամաւոր մը
29. Առանձնակեաց ծերունի քոյր մը
30. Դործազուրկ քոյր մը

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Savournin Marseille

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN